



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԿՈՒԵԳԻԱ

#### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2013 թվականի դեկտեմբերի «10»

Թիվ 289

ք. Մոսկվա

**Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու եւ Մաքսային միության հանձնաժողովի ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի մի քանի որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 68-րդ, 191-րդ եւ 193-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման կարգը»,

ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման ձեւը,

«Ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման ձեւը լրացնելու մասին» հրահանգը:

2. Մաքսային միության հանձնաժողովի որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

3. Սահմանել, որ մաքսային մարմինների կողմից մինչեւ 2011 թվականի

հունվարի 1-ը գրանցված ապրանքների մասին հայտարարագրերում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվում են այն մաքսային փաստաթղթերի օգտագործմամբ, որոնք մինչեւ նշված ամսաթիվը կիրառվել են Մաքսային միության անդամ պետություններում:

#### 4. Ուժը կորցրած ճանաչել՝

«Ապրանքների բացթողումից հետո ապրանքների մասին հայտարարագրում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 255 որոշումը.

«Նախնական մաքսային հայտարարագրման դեպքում մինչեւ ապրանքների բացթողման մասին որոշում ընդունելն ապրանքների մասին հայտարարագրում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 256 որոշումը.

«Ապրանքների բացթողումից հետո ապրանքների մասին հայտարարագրում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգի մասին հրահանգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 19-ի թիվ 639 որոշումը.

«Ապրանքների բացթողումից հետո ապրանքների մասին հայտարարագրում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգի մասին հրահանգում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի հունիսի 7-ի թիվ 68 որոշումը.

«Ապրանքների բացթողումից հետո ապրանքների մասին հայտարարագրում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգի մասին հրահանգում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 18-ի թիվ 131 որոշումը:

#### 5. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի  
կոլեգիայի նախագահ

Վ. Խրիստենկո

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի  
դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ

### ԿԱՐԳ

#### **ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման**

##### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգով սահմանում են ապրանքների մասին հայտարարագրում (այսուհետ՝ ԱՀ) նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման դեպքերը եւ կարգը:

2. ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելիս օգտագործվում է ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտումը (այսուհետ՝ ԱՀՃ)՝ բացառությամբ սույն Կարգի 9-րդ կետում, 14-րդ կետի երկրորդ պարբերությունում, 20-րդ եւ 26-րդ կետերում նշված դեպքերի:

ԱՀՃ-ն լրացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման ձեւը լրացնելու մասին» հրահանգին համապատասխան:

ԱՀՃ-ն անբաժանելի մասն է այն ԱՀ-ի, որում կատարվում են փոփոխությունները եւ (կամ) լրացումները:

3. ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են

Մաքսային միության այն անդամ պետությունում (այսուհետ՝ անդամ պետություն), որի մաքսային մարմնում գրանցվել է այն ԱՀ-ն, որում կատարվում են փոփոխությունները եւ (կամ) լրացումները:

4. Մաքսային ներկայացուցիչը հայտարարատուի անունից եւ հանձնարարականով կարող է իրականացնել ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման հետ կապված մաքսային գործառնությունները համապատասխան մաքսային գործառնություններն իրականացնելու՝ մաքսային ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում: ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացնելու՝ մաքսային ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե այդ փաստաթղթերը մաքսային մարմին են ներկայացվել այն ԱՀ-ն ներկայացնելու ժամանակ, որում կատարվում են փոփոխությունները եւ (կամ) լրացումները:

## II. Ապրանքների մասին հայտարարագրում ներկայացված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելը՝ մինչեւ ապրանքների բացթողումը

5. ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում փոփոխությունները եւ (կամ) լրացումները կատարվում են հետեւյալի հիման վրա.

ա) մաքսային մարմնի թույլտվություն՝ ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին հայտարարատուի հիմնավորված գրավոր դիմումի (այսուհետ՝ գրավոր դիմում) հիման վրա՝ միաժամանակ պահպանելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 191-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանները.

բ) գրավոր դիմում՝ Օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքում, եթե անհրաժեշտ է ԱՀ-ում ներառել այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց բնույթով հայտարարատուին չէին կարող հայտնի լինել ապրանքների նախնական մաքսային հայտարարագրման ժամանակ՝ մինչև ապրանքների ներմուծումը Մաքսային միության միասնական մաքսային տարածք եւ (կամ) դրանք մաքսային մարմին ներկայացվելը.

գ) ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին մաքսային մարմնի կողմից ընդունված որոշում:

6. Սույն Կարգի 5-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերում նշված դեպքերում գրավոր դիմումը ներկայացվում է այն մաքսային մարմին, որում գրանցվել է ԱՀ-ն:

Գրավոր դիմումը կազմվում է՝ այն ազատ ձեւով շարադրելով՝ դրանում նշելով ԱՀ-ի գրանցման համարը, ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում կատարվող փոփոխությունների եւ (կամ) լրացումների ցանկը՝ այդպիսի փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորմամբ:

Գրավոր դիմումին կցվում են պատշաճորեն լրացված ԱՀԾ-ն, դրա էլեկտրոնային պատճենը, ինչպես նաեւ ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը: Եթե ԱՀ-ում կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը նախկինում ներկայացվել են մաքսային մարմին՝ ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ, ապա գրավոր դիմումը ներկայացնելիս դրանք կրկնակի ներկայացնելու պահանջ չի սահմանվում: Սույն Կարգի 9-րդ կետով նշված դեպքում ԱՀԾ-ն եւ դրա էլեկտրոնային պատճենը ներկայացնելու պահանջ չի սահմանվում:

Եթե ԱՀ-ն ներկայացվել է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, ապա ԱՀԾ-ն ու ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը հայտարարատուի կողմից կարող են ներկայացվել տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ անդամ

պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ դեպքում ԱՀԾ-ն ներկայացվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

7. Այն դեպքում, երբ պահպանվում են սույն Կարգի 3–6-րդ կետերի դրույթները, մաքսային մարմնի պաշտոնատար անձը (այսուհետ՝ պաշտոնատար անձ) ապրանքների բացթողման ժամկետը չգերազանցող ժամկետում գրանցում է ԱՀԾ-ն՝ դրան գրանցման համար տալու միջոցով, եւ համապատասխան գրառումներ (նշումներ) է կատարում ԱՀ-ում եւ ԱՀԾ-ում:

8. Այն դեպքում, երբ չեն պահպանվում սույն Կարգի 3–6-րդ կետերի դրույթները, պաշտոնատար անձն ապրանքների բացթողման ժամկետը չգերազանցող ժամկետում մերժում է ԱՀԾ-ի գրանցումը՝ նշելով մերժման պատճառները:

ԱՀԾ-ի գրանցման մերժումը ձեւակերպվում է երկու օրինակից՝ ըստ 1-ին հավելվածի համաձայն սահմանված ձեւի, «A4» ձեւաչափի առանձին թերթի կամ ԱՀԾ-ի դարձերեսի վրա:

Եթե ԱՀԾ-ի գրանցման մերժումը ձեւակերպված է «A4» ձեւաչափի առանձին թերթի վրա, ապա պաշտոնատար անձը հայտարարատուին հանձնում է ԱՀԾ-ի երկու օրինակը եւ դրան կից փաստաթղթերը, ինչպես նաեւ մերժման մեկ օրինակը:

Եթե ԱՀԾ-ի գրանցման մերժումը ձեւակերպված է ԱՀԾ-ի դարձերեսի վրա, ապա պաշտոնատար անձը հայտարարատուին հանձնում է ԱՀԾ-ի երկու օրինակը, որոնցից մեկի վրա ձեւակերպված է ԱՀԾ-ի գրանցման մերժումը, ինչպես նաեւ դրան կից փաստաթղթերը:

Սույն կետի երրորդ եւ չորրորդ պարբերություններում նշված փաստաթղթերը ստացած անձը ԱՀԾ-ն գրանցելու մերժման երկրորդ օրինակի վրա, որը մնում է մաքսային մարմնում, նշում է դրանց ստացման ամսաթիվն ու ժամը՝ նշելով նաեւ իր ազգանունն ու անվան սկզբնատառերը, ինչպես նաեւ դնում է իր ստորագրությունը:

ԱՀԾ-ի օրինակը (օրինակները), թղթային կրիչով ներկայացված՝ դրան կից փաստաթղթերի պատճենները, ինչպես նաեւ մերժման երկրորդ օրինակը, եթե ԱՀԾ-

ի գրանցման մերժումը ձեռակերպված է «A4» ձեռագրի առանձին թերթի վրա, մնում են մաքսային մարմնում եւ օգտագործվում մաքսային նպատակներով:

Եթե ԱՀՃ-ն ներկայացվել է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, ապա մերժումն հայտարարատուին ուղարկվում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Այն դեպքում, երբ պահպանվում են սույն Կարգի 3 – 6-րդ կետերի դրույթները, ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները, կարող են կատարվել ԱՀ-ն լրացրած անձի կողմից ձեռքով՝ սխալ տեղեկությունների վրա գիծ քաշելով եւ դրանց վերելում տպատառ լրացնելով ճիշտ տեղեկությունները, եթե կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները դժվարընթեռնելի եւ (կամ) անընթեռնելի չեն դարձնում ԱՀ-ում ներկայացված տեղեկությունները: Թույլատրվում է ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում կատարել ոչ ավելի, քան երեք այդպիսի փոփոխություն եւ (կամ) լրացում: Փոփոխությունները եւ (կամ) լրացումները կատարվում են ԱՀ-ի բոլոր օրինակներում: Յուրաքանչյուր փոփոխություն եւ (կամ) լրացում հաստատվում է ԱՀ-ն լրացրած անձի ստորագրությամբ եւ կնիքի դրոշմվածքով, եթե անդամ պետությունների օրենսդրության համաձայն, այդ անձը պետք է կնիք ունենա: Ընդ որում, ԱՀ-ն լրացրած անձը ներկայացնում է ԱՀ-ի էլեկտրոնային պատճենը՝ դրանում կատարված փոփոխություններով եւ (կամ) լրացումներով:

Այն դեպքում, երբ չեն պահպանվում սույն Կարգի 3 – 6-րդ կետերի դրույթները, մաքսային մարմինը մերժում է ԱՀ-ում ներկայացված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը, ինչի մասին պաշտոնատար անձի կողմից համապատասխան նշում է կատարվում գրավոր դիմումի մեջ, որը հանձնվում է ԱՀ-ն լրացրած անձին:

10. Ապրանքների մաքսային արժեքի մասին տեղեկություններում՝ մինչեւ դրանց բացթողումը, փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվում են «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, հսկողության եւ ճշգրտման կարգերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի



թիվ 376 որոշմանը համապատասխան ընդունված՝ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին մաքսային մարմնի որոշման հիման վրա: Հայտարարատուն պարտավոր է ապրանքների բացթողման ժամկետը չգերազանցող ժամկետում մաքսային մարմին ներկայացնել պատշաճորեն լրացված ԱՀԾ-ն, մաքսային արժեքի հայտարարագիրը (այսուհետ՝ ՄԱՀ) եւ դրանց էլեկտրոնային պատճենները, ինչպես նաեւ այն մաքսատուրքերի, հարկերի եւ այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները, որոնց գանձումը պետք է ապահովեն մաքսային մարմինները (այսուհետ՝ մաքսային, այլ վճարներ)՝ ճշգրտված տեղեկությունների հիման վրա:

Եթե ԱՀ-ն ներկայացվել է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, ապա ԱՀԾ-ն եւ ՄԱՀ-ն, ինչպես նաեւ մաքսային, այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները հայտարարատուի կողմից կարող են ներկայացվել տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում, ԱՀԾ-ն եւ ՄԱՀ-ն ներկայացվում են էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով:

Եթե ԱՀԾ-ն եւ ՄԱՀ-ն լրացված են պատշաճորեն, ապա պաշտոնատար անձն ապրանքների բացթողման ժամկետը չգերազանցող ժամկետում գրանցում է ԱՀԾ-ն՝ դրան գրանցման համար տալու միջոցով, եւ համապատասխան գրառումներ (նշումներ) է կատարում ԱՀ-ում, ԱՀԾ-ում եւ ՄԱՀ-ում:

Եթե մինչեւ ապրանքների բացթողման ժամկետը լրանալը ԱՀԾ-ն եւ ՄԱՀ-ն, ինչպես նաեւ մաքսային, այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները ճշգրտված տեղեկությունների հիման վրա մաքսային մարմին չեն ներկայացվում կամ ներկայացված ԱՀԾ-ն եւ ՄԱՀ-ն լրացված են ոչ պատշաճորեն, մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը:

III. Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում  
փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելն ապրանքների բացթողումից  
հետո

11. ԱՀ-ում նշված տեղեկությունները ապրանքների բացթողումից հետո  
ենթակա են փոփոխման եւ (կամ) լրացման՝

ա) մաքսային մարմինների կողմից իրենց իրավասության շրջանակներում  
անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան իրականացվող, այդ  
թվում՝ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ  
կատարելու մասին հայտարարատուի հիմնավորված գրավոր դիմումի (այսուհետ՝  
դիմում) առնչությամբ մաքսային մարմնի կողմից կատարված մաքսային  
հսկողության կամ հսկողության այլ ձեւի արդյունքների հիման վրա՝ հետեւյալ  
դեպքերում՝

մաքսային մարմնի կողմից ընդունվել է որոշում ապրանքների մաքսային  
արժեքի ճշգրտման մասին՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի  
սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմանը համապատասխան.

բացահայտվել են ոչ հավաստի տեղեկություններ ապրանքների  
դասակարգման, ապրանքների ծագման երկրի, մաքսային վճարների գծով  
արտոնությունների տրամադրմանն առնչվող պայմանների պահպանման, ինչպես  
նաեւ այլ տեղեկությունների, այդ թվում՝ հաշվարկված եւ (կամ) վճարման ենթակա  
մաքսային, այլ վճարների չափի փոփոխության հանգեցնող տեղեկությունների  
վերաբերյալ.

բացահայտվել են հայտագրված մաքսային ընթացակարգի հետ կապված  
պայմանները եւ պահանջները չպահպանելու դեպքեր.

բացահայտվել են փաստեր մաքսատուրքերի, հարկերի վճարման  
արտոնություններից օգտվելու համար սահմանված՝ ապրանքների օգտագործման եւ  
(կամ) տնօրինման սահմանափակումների խախտմամբ կամ այդպիսի  
արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող

նպատակների խախտմամբ այդ ապրանքները գործողությունների ենթարկելու վերաբերյալ.

բացահայտվել են փաստեր անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակումների խախտմամբ այդ ապրանքները գործողությունների ենթարկվելու վերաբերյալ՝ բացառությամբ սույն ենթակետի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքի.

կիրառվել (վերականգնվել) է սակագնային առանձնաշնորհումների տրամադրման ռեժիմը կամ ազգերի առավել բարենպաստության ռեժիմը.

առաջացել է ԱՀ-ում նշված տեղեկություններում լրացումներ կատարելու անհրաժեշտություն.

բացահայտվել է ԱՀ-ում նշված տեղեկությունների անհամապատասխանություն ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների եւ (կամ) ԱՀ-ում նշվելու ենթակա տեղեկություններին հետ.

բացահայտվել է պաշտոնատար անձի կողմից լրացվող ԱՀ-ի վանդակների գրառումներում (նշումներում) փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտություն.

բ) Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այնպիսի հանգամանքների առաջացման դեպքում, որոնք հանգեցնում են ապրանքների բացթողումից հետո ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ լրացումների կատարմանը, այդ թվում՝

մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը երկարաձգելու դեպքում.

հայտարարատուի՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններից օգտվելուց հրաժարվելու դեպքում.

հայտարարատուի՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակումները պահպանելուց հրաժարվելու դեպքում.

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման դեպքում՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատմամբ.

այն մաքսատուրքերի, հարկերի վճարման դեպքում, որոնց համար ընձեռվել է հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորություն.

գ) մաքսային մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների (անգործության) վերաբերյալ բողոքների ուսումնասիրման արդյունքների հիման վրա կամ անդամ պետությունների դատական մարմինների՝ օրինական ուժի մեջ մտած որոշումների հիման վրա:

IV. Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելն ապրանքների բացթողումից հետո՝ հայտարարատուի նախաձեռնությամբ

12. Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում ապրանքների բացթողումից հետո հայտարարատուի նախաձեռնությամբ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվում են դիմումի հիման վրա կամ սույն կետի երրորդ պարբերությունում նշված փաստաթղթերի հիման վրա՝ այն դեպքերում, երբ հայտարարատուի դիմումը չի ներկայացվում:

Դիմումը եւ սույն կետի երրորդ պարբերությունում նշված փաստաթղթերը ներկայացվում են այն մաքսային մարմին, որում գրանցվել է ԱՀ-ն:

Դիմումը չի ներկայացվում սույն Կարգի 11-րդ կետի «բ» ենթակետի երկրորդ, հինգերորդ եւ վեցերորդ պարբերություններով նախատեսված դեպքերում: Ընդ

որում, հայտարարատուի կողմից ներկայացվում են պատշաճորեն լրացված ԱՀԾ-ն, դրա էլեկտրոնային պատճենը, ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը, իսկ մաքսային, այլ վճարների վճարման անհրաժեշտության դեպքում՝ նաեւ դրանց վճարումը հաստատող փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները:

13. Դիմումը կազմվում է գրավոր՝ այն ազատ ձեւով շարադրելով, եթե սույն Կարգով այլ բան սահմանված չէ: Դիմումի մեջ նշվում է ԱՀ-ի գրանցման համարը, դրանում կատարվող փոփոխությունների եւ (կամ) լրացումների ցանկը եւ այդպիսի փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորումը:

14. Դիմումին կցվում են պատշաճորեն լրացված ԱՀԾ-ն, դրա էլեկտրոնային պատճենը, ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը, այդ թվում՝ մաքսային, այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում՝ նաեւ ՄԱՀ-ն եւ դրա էլեկտրոնային պատճենը:

Փոփոխությունները եւ (կամ) լրացումները բացառապես պաշտոնատար անձի կողմից լրացվող ԱՀ-ի՝ վանդակների գրառումներում (նշումներում) կատարելու անհրաժեշտության դեպքում ԱՀԾ-ն եւ դրա էլեկտրոնային պատճենը ներկայացնելու պահանջ չի սահմանվում:

15. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման դեպքում դիմումը, ԱՀԾ-ն, ինչպես նաեւ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում ՄԱՀ-ն, կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը, այդ թվում՝ մաքսային, այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերը կարող են հայտարարատուի կողմից էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ներկայացվել տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

16. Դիմումն ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմին ներկայացնելու դեպքում մաքսային մարմինն այն գրանցում է, այդ թվում՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ նշելով այն ներկայացնելու ամսաթիվը:

Մաքսային մարմնի կողմից դիմումի ուսումնասիրումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

17. Դիմումը կամ սույն Կարգի 12-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրող մաքսային մարմինը մաքսային հսկողություն է իրականացնում Օրենսգրքով սահմանված կարգով:

Այն դեպքում, երբ էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ներկայացված փաստաթղթերի ստուգման ընթացքում առաջանում է ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարվող փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաստատող փաստաթղթերը թղթային կրիչով ներկայացնելու անհրաժեշտություն, հայտարարատուին ուղարկվում է պահանջ այդ փաստաթղթերն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ ներկայացնելու վերաբերյալ:

18. Մաքսային մարմինն ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելը մերժում է հետեւյալ դեպքերում՝

ա) դիմումը կամ սույն Կարգի 12-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից ստացվել են Օրենսգրքի 99-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ավարտից հետո,

բ) սույն Կարգի 3-րդ, 4-րդ, 11–15-րդ կետերով նախատեսված պահանջները չեն կատարվել,

գ) ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն իրականացնելիս մաքսային մարմնի կողմից բացահայտվել են այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում հայտարարատուի կողմից ԱՀ-ում նշվելու համար

ներկայացված եւ դիմումի մեջ կամ սույն Կարգի 12-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան ներկայացված փաստաթղթերում նշված տեղեկություններին:

Մաքսային մարմինը հայտարարատուին գրավոր տեղեկացնում է ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը մերժելու մասին:

19. ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը մերժելու համար սույն Կարգի 18-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում պաշտոնատար անձը դիմումի ուսումնասիրման համար անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված ժամկետում որոշում է ընդունում ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման մասին: Այդ որոշումը կայացվում է ԱՀԾ-ի գրանցման միջոցով՝ դրան գրանցման համար տալով: Ընդ որում, պաշտոնատար անձը համապատասխան գրառումներ (նշումներ) է կատարում ԱՀ-ում եւ ԱՀԾ-ում, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում՝ նաեւ ՄԱՀ-ում:

20. Այն դեպքում, երբ անհրաժեշտ է փոփոխությունները եւ (կամ) լրացումները կատարել բացառապես ԱՀ-ի՝ պաշտոնատար անձի կողմից լրացվող վանդակների գրառումներում (նշումներում), ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունները եւ (կամ) լրացումները պաշտոնատար անձը կատարում է ձեռքով եւ վավերացնում ստորագրությամբ ու անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով (դրա առկայության դեպքում)՝ նշելով փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման ամսաթիվը: Ընդ որում, պաշտոնատար անձը համապատասխան փոփոխությունները եւ (կամ) լրացումները կատարում է ԱՀ-ի էլեկտրոնային պատճենում:

Պաշտոնատար անձի կողմից կատարված փոփոխություններով եւ (կամ) լրացումներով ԱՀ-ի՝ մաքսային մարմնի կողմից հաստատված պատճենը փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման օրվանից երեք աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ստորագրությամբ հանձնվում է

հայտարարատուին կամ ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ:

Էլեկտրոնային ԱՀ-ի՝ պաշտոնատար անձի կողմից լրացվող վանդակների գրառումներում (նշումներում) փոփոխությունները եւ (կամ) լրացումները պաշտոնատար անձը կատարում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ: Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված ԱՀ-ն, կատարված փոփոխություններով եւ (կամ) լրացումներով, կամ այդպիսի փոփոխությունների եւ (կամ) լրացումների մասին տեղեկությունները հայտարարատուին ուղարկվում են մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելն ապրանքների բացթողումից հետո՝ մաքսային մարմնի նախաձեռնությամբ

21. ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունները եւ (կամ) լրացումներն ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմնի նախաձեռնությամբ կատարվում են ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին որոշման (այսուհետ՝ որոշում) հիման վրա՝ ըստ 2-րդ հավելվածի համաձայն սահմանված ձեւի:

22. Որոշումն ընդունելու օրվանից սկսած երեք աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում այն ստորագրությամբ հանձնվում է հայտարարատուին կամ ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ ժամկետում հանձնելու մասին ծանուցմամբ:

23. Որպես որոշում կարող է դիտարկվել մաքսային մարմնի՝ մաքսային հսկողության արդյունքների հիման վրա ընդունված այլ որոշում, եթե այդպիսի որոշումը ներառում է ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ



(կամ) լրացումների կատարման մասին պահանջը, ԱՀ-ի գրանցման համարի մասին տեղեկություններ, ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարվող փոփոխությունների եւ (կամ) լրացումների ցանկը, ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման հիմքերը, ԱՀԾ-ն, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ն մաքսային մարմին ներկայացնելու ժամկետը:

24. Հայտարարատուն, հիմք ընդունելով մաքսային մարմնի կողմից որոշման մեջ նշված տեղեկությունները, որոշումն ստանալու օրվանից տասն աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ԱՀԾ-ն եւ դրա էլեկտրոնային պատճենը, ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ն եւ դրա էլեկտրոնային պատճենը, իսկ մաքսային, այլ վճարների վճարման դեպքում նաեւ դրանց վճարումը հաստատող փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները ներկայացնում է այն մաքսային մարմին, որում գրանցվել է այն ԱՀ-ն, որի տեղեկությունները փոփոխվում եւ (կամ) լրացվում են:

Նշված փաստաթղթերը եւ տեղեկությունները հայտարարատուի կողմից մաքսային մարմին ներկայացնելու ժամկետը կարող է գերազանցել որոշումն ստանալու օրվանից տասն աշխատանքային օրը, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, այն դեպքում, երբ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը հանգեցնում է մաքսային, այլ վճարների վճարմանը:

Պաշտոնատար անձը ստուգում է ԱՀԾ-ի, իսկ մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ի լրացման ճշտությունը: Եթե ԱՀԾ-ն, իսկ մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ն լրացված են պատշաճորեն, ապա ԱՀԾ-ն մաքսային մարմին ներկայացվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում պաշտոնատար անձը գրանցում է ԱՀԾ-ն՝ դրան գրանցման համար տալու միջոցով, եւ համապատասխան գրառումներ (նշումներ) է կատարում ԱՀ-ում եւ ԱՀԾ-ում, իսկ մաքսային արժեքի ճշգրտման դեպքում՝ նաեւ ՄԱՀ-ում:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման դեպքում ԱՀԾ-ն, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ն, մաքսային, այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերը կարող են հայտարարատուի կողմից էլեկտրոնային փաստաթղթերը կարող են տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Եթե ԱՀԾ-ն, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ն մաքսային մարմին չեն ներկայացվել կամ ներկայացված ԱՀԾ-ն եւ (կամ) ՄԱՀ-ն լրացված են ոչ պատշաճորեն, ապա դրանք լրացվում են պաշտոնատար անձի կողմից:

Որոշումը հասցեատիրոջը չհանձնելու մասին նշումով փոստային առաքանին մաքսային մարմնի կողմից ստանալու կամ սույն Կարգի 24-րդ կետի առաջին պարբերությամբ կամ երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետները լրանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում պաշտոնատար անձը հայտարարատուին ուղարկում է ԱՀԾ-ի, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում՝ նաեւ ՄԱՀ-ի համապատասխան օրինակները:

Հայտարարատուին ԱՀԾ-ի, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ ՄԱՀ-ի համապատասխան օրինակներն ուղարկելու ժամկետը կարող է գերազանցել սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետը, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, այն դեպքում, երբ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը հանգեցնում է մաքսային, այլ վճարների վճարմանը:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու դեպքում մաքսային մարմինը կարող է ԱՀԾ-ն, իսկ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում նաեւ էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ներկայացված ՄԱՀ-ներն հայտարարատուին ուղարկել մաքսային մարմնի տեղեկատվական

համակարգերի օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

26. Փոփոխությունները եւ (կամ) լրացումները բացառապես ԱՀ-ի՝ պաշտոնատար անձի կողմից լրացվող վանդակների գրառումներում (նշումներում) կատարվում են սույն Կարգի 20-րդ կետին համապատասխան:

---

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ապրանքների մասին հայտարարագրում  
նշված տեղեկություններում  
փոփոխությունների եւ (կամ) լրացումների  
կատարման կարգի

(ծեւ)

Մ Ե Ր Ժ Ո Ւ Մ

**ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտումը գրանցելու**

թիվ \_\_\_\_\_ ապրանքների մասին հայտարարագրի,

ներկայացված՝

\_\_\_\_\_ ,

(հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի անվանումը)

հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) դիմում

20\_\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_»-ի թիվ \_\_\_\_

Համարը՝ ը/կ	Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտումը գրանցելու մերժման պատճառները	Ծանոթագրություն


\_\_\_\_\_

(պաշտոնատար անձի ԱԱՀ-ն)

(ստորագրությունը)

Անձնական  
համարակալված  
կնիքը

20\_\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_»

\_\_\_\_\_

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ապրանքների մասին հայտարարագրում  
նշված տեղեկություններում  
փոփոխությունների եւ (կամ) լրացումների  
կատարման կարգի

(ծեւ)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում  
փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման մասին**

20\_\_\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_\_»

Մաքսային մարմնի  
անվանումը

Հայտարարատուի անվանումը

Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման կարգի» 11-րդ կետի \_\_\_\_\_ ենթակետի \_\_\_\_\_ պարբերությունը՝

կապված

հետ

(ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման հիմքերը) անհրաժեշտ է կատարել հետեւյալ փոփոխությունները եւ (կամ) լրացումները.

Համարը՝ ը/կ	Ապրանքների մասին հայտարարագրի գրանցման համարը	Ապրանքի հերթական համարը	Վանդակի/վան- դակի ենթաբաժնի համարը	Ավելի վաղ նշված տեղեկու- թյունները	Փոփոխված եւ (կամ) լրացված տեղեկություն- ները

(նշվում է ժամկետը՝ «Ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ լրացումների կատարման կարգի» 24-րդ կետին համապատասխան)

ոչ ուշ ժամկետում հայտարարատուն պետք է ներկայացնի ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտումը եւ դրա էլեկտրոնային պատճենը, ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման դեպքում՝ նաեւ մաքսային արժեքի հայտարարագիրը եւ դրա էլեկտրոնային պատճենը, իսկ այն մաքսատուրքերի, հարկերի եւ այլ վճարների վճարման դեպքում, որոնց գանձումը պետք է ապահովեն մաքսային մարմինները՝ նաեւ փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ, որոնցով հաստատվում է դրանց վճարումը:

Անձնական  
համարակալված  
կնիքը

\_\_\_\_\_  
(մաքսային մարմնի պաշտոնատար անձի ԱԱՀ-ն)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(հայտարարատուի ներկայացուցչի (մաքսային ներկայացուցչի) ԱԱՀ-ն)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(որոշումն ստանալու ամսաթիվը)

\_\_\_\_\_  
(որոշումն ուղարկելու փոստային հասցեն նշվում է որոշումը փոստով ուղարկելու դեպքում)

\_\_\_\_\_  
(որոշումը փոստով ուղարկելու ամսաթիվը)

\_\_\_\_\_  
(որոշումը փոստով ուղարկած՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ԱԱՀ-ն եւ ստորագրությունը)

\_\_\_\_\_



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական  
 հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի  
 դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ

Ձ Ե Վ

ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման

(հիմնական թերթ (ԱՀՃ1))

				A	
2. Ուղարկողը/Արտահանողը	№	1. ՀԱՅՏԱՐԱ- ՐԱԳԻՐ			
		3. Ձեւերը	4. Բեռնա- ռաքման մասնա- գրերը		
		5. Ընդա- մենը ապրա նքներ	6. Ընդամենը տեղերը		
8. Ստացողը	№	9. Ֆինանսական կարգավորումների համար պատասխանատու անձը			
14. Հայտարարատուն	№	10. Առաջին նշանակմ ան/ վերջին ուղարկող երկիրը	11. Վաճառող երկիրը	12. Ընդհանուր մաքսային արժեքը	
		15. Ուղարկող երկիրը	15. Ուղարկող երկրի ծածկագիրը a  b	17. Նշանակման երկրի ծածկագիրը a  b	
18. Տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը ուղարկման (ժամանման) պահին	19. Բեռնարկը	16. Ծագման երկիրը			
21. Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը		20. Մատակարարման պայմանները		17. Նշանակման երկիրը	
		22. Արժույթը եւ ընդհանուր գումարը՝		23. Արժույթի փոխարժեքը	24. Գործարքի բնույթը

	սահմանի վրա					ըստ հաշիվ ապրանքագրի									
	25. Տրանսպորտային միջոցի տեսակը սահմանին	26. Տրանսպորտային միջոցի տեսակը երկրի ներսում	27. Բեռնման (բեռնաթափման) վայրը		28. Ֆինանսական եւ բանկային տեղեկությունները										
	29. Մուտքի (ելքի) մարմինը		30. Ապրանքների գտնվելու վայրը												
31. Բեռնատեղիները եւ ապրանքների նկարագրությունը	Դրոշմավորումը եւ քանակը. Բեռնարկղերի համարները. Քանակը եւ առանձնահատկությունները					32. Ապրանքը №		33. Ապրանքի ծածկագիրը							
						34. Ծագման երկրի ծածկագիրը a   b		35. Համաքաշը (կգ)		36. Առանձնաշնորհումը					
						37. ԸՆԹԱՑԱ-ԿԱՐԳԸ		38. Ձտաքաշը (կգ)		39. Քվտան					
						40. Ընդհանուր հայտարարագիրը/Նախորդող փաստաթուղթը					41. Լրացուցիչ միավորները		42. Ապրանքի գինը		43. ԱՈՄ-ի ծածկագիրը
						44. Լրացուցիչ տեղեկություններ/Ներկայացված փաստաթղթերը					45. Մաքսային արժեքը				
					45a Փոփոխությունների ծածկագիրը		46. Վիճակագրական արժեքը								
47. Վճարների հաշվարկումը	Տեսակը	Հաշվեգրման հիմքը	Դրույքաչափը	Գումարը	ՎԵ	48. Վճարման հետաձգումը		49. Պահեստի վավերապայմանները							
	B ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ														
		Տեսակը	Գումարը	Նախորդ գումարը	Փոփոխությունները	Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը		ՎՁ							
	Վճարման (բռնագանձման) կամ վերադարձման ենթակա ընդհանուր գումարը														
51. Տարանցման ենթադրվող մարմինները (եւ						C									

երկիրը)					
52. Երաշխիքն անվավեր է համարվում (... համար)				Ծածկա- գիրը	53. Նշանակման մարմինը (եւ երկիրը)
D					54. Վայրը եւ ամսաթիվը

(լրացուցիչ թերթ (ԱՀՃ2))

			A		
		1. ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ			
	2. Ուղարկողը/ Արտահանողը	№	3. Ձեռքը		
31. Բեռնատեղիները եւ ապրանքների նկարագրությունը	Դրոշմավորումը եւ քանակը. Բեռնարկղերի համարները. Քանակը եւ առանձնահատկությունները		32. Ապրանքը №	33. Ապրանքի ծածկագիրը	
				34. Ծագման երկրի ծածկագիրը a   b	35. Համաքաշը (կգ)
				37. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	38. Ջտաքաշը (կգ)
				39. Քվտան	
				40. Ընդհանուր հայտարարագիրը/Նախորդող փաստաթուղթը	
			41. Լրացուցիչ միավորները	42. Ապրանքի գինը	43. ԱՈՄ-ի ծածկագիրը
44. Լրացուցիչ տեղեկություններ/Ներկայացված փաստաթղթերը			45. Մաքսային արժեքը		
			45a Փոփոխությունների ծածկագիրը	46. Վիճակագրական արժեքը	
31. Բեռնատեղիները եւ ապրանքների նկարագրությունը	Դրոշմավորումը եւ քանակը. Բեռնարկղերի համարները. Քանակը եւ առանձնահատկությունները		32. Ապրանքը №	33. Ապրանքի ծածկագիրը	
				34. Ծագման երկրի ծածկագիրը a   b	35. Համաքաշը (կգ)
				37. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	38. Ջտաքաշը (կգ)
				39. Քվտան	
				40. Ընդհանուր հայտարարագիրը/Նախորդող փաստաթուղթը	
			41. Լրացուցիչ միավորները	42. Ապրանքի գինը	43. ԱՈՄ-ի ծածկագիրը

44. Լրացուցիչ տեղեկություններ/ Ներկայացված փաստաթղթերը											
	45. Մաքսային արժեքը										
31. Բեռնատեղիները եւ ապրանքների նկարագրությունը	Դրոշմավորումը եւ քանակը. Բեռնարկերի համարները. Քանակը եւ առանձնահատկությունները					32. Ապրանքը №	33. Ապրանքի ծածկագիրը				
											34. Ծագման երկրի ծածկագիրը a   b
44. Լրացուցիչ տեղեկություններ/ Ներկայացված փաստաթղթերը							37. ԸՆԹԱՑԱ-ԿԱՐԳԸ		38. Զտաքաշը (կգ)	39. Քվոտան	
							40. Ընդհանուր հայտարարագիրը/Նախորդող փաստաթուղթը				41. Լրացուցիչ միավորները
45. Մաքսային արժեքը											
45a Փոփոխությունների ծածկագիրը										46. Վիճակագրական արժեքը	
47. Վճարների հաշվարկումը	Տեսակը	Հաշվեգրման հիմքը	Դրույքաչափը	Գումարը	ՎԵ	Տեսակը	Հաշվեգրման հիմքը	Դրույքաչափը	Գումարը	ՎԵ	
	Տեսակը	Հաշվեգրման հիմքը	Դրույքաչափը	Գումարը	ՎԵ	C					

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի  
դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ

#### **ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման ձեւի լրացման մասին**

1. Սույն Հրահանգով սահմանվում են ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման (այսուհետ՝ ԱՀՃ) ձեւի լրացման կանոնները, որոնք կիրառվում են ապրանքների մասին հայտարարագրում (այսուհետ՝ ԱՀ) նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելիս:

2. ԱՀՃ-ն բաղկացած է «A4» ձեւաչափի հիմնական եւ լրացուցիչ թերթերից (այսուհետ, համապատասխանաբար՝ ԱՀՃ1, ԱՀՃ2) եւ այն ԱՀ-ի անբաժանելի մասն է, որում կատարվում են փոփոխությունները եւ (կամ) լրացումները:

Մեկ անուն ապրանքի մասին տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելիս կիրառվում է ԱՀՃ1-ը:

Մեկ ԱՀ-ում հայտագրված երկու կամ ավելի անուն ապրանքների մասին տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելիս կիրառվում է ԱՀՃ1 եւ անհրաժեշտ քանակի ԱՀՃ2: Յուրաքանչյուր ԱՀՃ2-ում կարող են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվել ոչ ավելի, քան երեք անուն ապրանքի մասին տեղեկություններում:

3. ԱՀՃ-ն չպետք է պարունակի ջնջումներ, ուղղումներ եւ շտկումներ:

4. Լրացվող ԱՀՃ-ի օրինակների քանակը եւ դրանց բաշխման կարգը համապատասխանում է ԱՀ-ի օրինակների թվին եւ բաշխման կարգին, որոնք սահմանված են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի

թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների մասին հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգով (այսուհետ՝ «ԱՀ-ի լրացման մասին» հրահանգ):

5. ԱՀԾ-ն լրացվում է ԱՀ-ում հայտագրված այն ապրանքների համար, որոնց մասին տեղեկությունները փոփոխվում եւ (կամ) լրացվում են:

6. Բելառուսի Հանրապետությունում պարտադիր կերպով լրացվում են ԱՀԾ-ի հետեւյալ վանդակները՝ 1 – 9-րդ, 11 – 15-րդ, 15 (a, b) – 17-րդ, 17 (a, b) – 30-րդ, 45a, 54-րդ (բացառությամբ այն դեպքի, երբ ԱՀԾ-ն լրացվել է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից), ինչպես նաեւ «A», «C» եւ «D» վանդակները:

Այն դեպքում, երբ փոփոխվում եւ (կամ) լրացվում են ապրանքների մասին տեղեկությունները, ապա այդ ապրանքների համար լրացուցիչ լրացվում են ԱՀԾ-ի հետեւյալ վանդակները՝ 31 – 45-րդ, 46 – 47-րդ, ինչպես նաեւ «B» վանդակը (այն դեպքում, երբ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելն ազդում է վճարման ենթակա այն մաքսատուրքերի, հարկերի եւ այլ վճարների գումարի չափի վրա, որոնց գանձումը պետք է ապահովեն մաքսային մարմինները (այսուհետ՝ մաքսային, այլ վճարներ), կամ վերաբերում է այն փաստաթղթերին, որոնցով հաստատվում է մաքսատուրքերի, հարկերի եւ այլ վճարների վճարումը):

Այն դեպքում, երբ ԱՀ-ի որեւէ վանդակում նշված տեղեկությունները չեն փոփոխվում եւ (կամ) չեն լրացվում, ապա ԱՀԾ-ի մեջ են փոխանցվում ԱՀ-ի համապատասխան վանդակում նշված տեղեկությունները: Այն դեպքում, երբ ապրանքների մասին տեղեկությունները չեն փոփոխվում եւ (կամ) չեն լրացվում, ապա ԱՀԾ-ի 5-րդ վանդակում նշվում է «0» թիվը:

7. Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում պարտադիր լրացվում են ԱՀԾ-ի հետեւյալ վանդակները՝ 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 14-րդ, 45a, 54-րդ (բացառությամբ այն դեպքի, երբ ԱՀԾ-ն լրացվել է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից), «A» եւ «D», ինչպես նաեւ ԱՀԾ-ի այն վանդակները, որոնք համապատասխանում են ԱՀ-ի վանդակներին եւ որոնցում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ են կատարվում:

8. ԱՀԾ-ի վանդակները լրացվում են «ԱՀ-ի վանդակների լրացման մասին» հրահանգով սահմանված՝ ԱՀ-ի վանդակների լրացման կարգին համապատասխան՝ բացառությամբ ԱՀԾ-ի առանձին վանդակների, որոնց լրացման առանձնահատկությունները սահմանված են սույն Հրահանգով:

9. ԱՀ-ի վանդակներում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելիս ԱՀԾ-ի համապատասխան վանդակի մեջ են փոխանցվում ԱՀ-ի վանդակի բոլոր տեղեկությունները՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները, բացառությամբ այն դեպքի, երբ սույն Հրահանգին համապատասխան՝ նախատեսված է ԱՀԾ-ի առանձին վանդակների լրացման այլ կարգ:

10. ԱՀԾ-ի 3-րդ, 12-րդ, 32-րդ, 44-րդ, 45-րդ, 45a, 46-րդ, 47-րդ, «B», 54-րդ վանդակները, ինչպես նաեւ «A» վանդակը լրացվում է՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) 3-րդ վանդակ. «Ձեւերը»

3 Ձեւերը
----------

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ԱՀԾ-ի թերթի հերթական համարը:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է ԱՀԾ-ի թերթերի ընդհանուր թիվը:

2) 12-րդ վանդակ. «Ընդհանուր մաքսային արժեքը»

12. Ընդհանուր մաքսային արժեքը
-------------------------------



Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը՝ որպես ԱՀՃ1-ի եւ ԱՀՃ2-ի 45-րդ վանդակի առաջին ենթաբաժնում, ինչպես նաեւ ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի 45-րդ վանդակում նշված մեծությունների գումար՝ Մաքսային միության այն անդամ պետության՝ թվային նիշերով արտահայտված արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ԱՀՃ-ն եւ դա այն ապրանքների դեպքում, որոնց մաքսային արժեքը չի փոփոխվել:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում ներկայացվում է ապրանքների մաքսային արժեքի մեծությունը, որը նշված է՝

ԱՀ-ի 12-րդ վանդակում, եթե ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվում են առաջին անգամ.

նախորդ ԱՀՃ-ի 12-րդ վանդակի առաջին ենթաբաժնում, եթե ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում ավելի վաղ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվել են.

Այն դեպքում, երբ մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները չեն փոփոխվում եւ (կամ) չեն լրացվում, ապա ԱՀՃ-ի 12-րդ վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում.

### 3) 32-րդ վանդակ. «Ապրանքը»

32. Ապրանքի համարը

Վանդակի առաջին ենթաբաժնում թվային նիշերով ներկայացվում է այն ապրանքի հերթական համարը, որը նշված է ԱՀ-ի 32-րդ վանդակում եւ որի մասին տեղեկություններում կատարվում են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ:

Վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում:

4) 44-րդ վանդակ. «Լրացուցիչ տեղեկություններ/Ներկայացված փաստաթղթերը»

44 Լրացուցիչ տեղեկություններ/Ներկայացված փաստաթղթերը	
--	--

Վանդակի մեջ են փոխանցվում ԱՀ-ի 44-րդ վանդակում նշված տեղեկությունները՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները, ինչպես նաեւ նշվում են փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը հաստատող փաստաթղթերի մասին տեղեկություններ՝ «ԱՀ-ի լրացման մասին» հրահանգով սահմանված՝ ԱՀ-ի 44-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան.

5) 45-րդ վանդակ. «Մաքսային արժեքը»

45 Մաքսային արժեքը	
--------------------	--

Վանդակի առաջին ենթաբաժնում թվային նիշերով նշվում է ապրանքի մաքսային արժեքի մեծությունը, որը որոշվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան (հաշվի առնելով ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները)՝ արտահայտված Մաքսային միության այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ԱՀԾ-ն:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում թվային նիշերով նշվում է ապրանքի մաքսային արժեքի մեծությունը՝ արտահայտված Մաքսային միության այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ԱՀԾ-ն, եւ որը նշված է՝

ԱՀ-ի 45-րդ վանդակում, եթե ապրանքի մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվում են առաջին անգամ.

նախորդ ԱՀԾ-ի 45-րդ վանդակի առաջին ենթաբաժնում, եթե ապրանքի մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում ավելի վաղ կատարվել են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ.

6) 45a վանդակ. «Փոփոխությունների ծածկագիրը»

45a Փոփոխությունների ծածկագիրը
-----------------------------------

Վանդակում նշվում է ութանիշ թվային ծածկագիր՝ ըստ հետեւյալ սխեմայի՝

$$\frac{X}{1} / \frac{X}{2} / \frac{X}{3} / \frac{X}{4} / \frac{X}{5} / \frac{X}{6} / \frac{X}{7} / \frac{X}{8},$$

որտեղ՝

1-ին բաղադրիչը՝ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու փուլը՝

0՝ մինչեւ ապրանքների բացթողումը.

1՝ ապրանքների բացթողումից հետո.

2-րդ բաղադրիչը՝ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու համար հիմք ծառայող հանգամանքները՝

0՝ հայտարարատուի դիմումը ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին.

1՝ փաստաթղթերի եւ տեղեկությունների ստուգման արդյունքները.

2՝ լրացուցիչ ստուգման արդյունքները.

3՝ մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) վերաբերյալ բողոքների ուսումնասիրման արդյունքները.

4՝ կամերալ մաքսային ստուգման արդյունքները.

5՝ արտագնա մաքսային ստուգման արդյունքները.

6՝ Մաքսային միության անդամ պետությունների դատական մարմինների՝ ուժի մեջ մտած որոշումները.

3-րդ բաղադրիչ՝ ԱՀ-ում ապրանքների քանակի (քաշի) վերաբերյալ նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները՝

0՝ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ չեն կատարվել.

1՝ տեխնիկական սխալներ (չափման միավորները ոչ ճիշտ նշելը, սխալներ՝ ծածկագրված տեղեկություններում եւ այլն).

2՝ ապրանքների փաստացի քանակի եւ (կամ) քաշի անհամապատասխանություն ԱՀ-ում նշված եւ (կամ) արտաքին տնտեսական գործարքի պայմաններով նախատեսված՝ ապրանքների քանակին եւ (կամ) քաշին, այդ թվում նաեւ՝ միեւնույն ժամանակ տեխնիկական սխալների հայտնաբերման դեպքում.

4-րդ բաղադրիչ՝ ԱՀ-ում նշված՝ ապրանքների ծագման երկրի եւ (կամ) սակագնային առանձնաշնորհումների վերաբերյալ տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները՝

0՝ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ չեն կատարվել.

1՝ ապրանքների ծագման երկրի մասին ոչ հավաստի տեղեկությունների բացահայտում.

2՝ սակագնային առանձնաշնորհումներ տրամադրելու պայմանների չկատարման դեպքերի բացահայտում.

3՝ մաքսային մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների (անգործության) վերաբերյալ բողոքների ուսումնասիրման արդյունքների կամ Մաքսային միության անդամ պետությունների դատական մարմինների՝ օրինական ուժի մեջ մտած որոշումների հիման վրա ապրանքների բացթողումից հետո սակագնային առանձնաշնորհումների տրամադրում.

4՝ սակագնային առանձնաշնորհումների վերականգնման մասին՝ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի դիմումի հիման վրա սակագնային առանձնաշնորհումների վերականգնում՝ ապրանքների բացթողումից հետո.

5-րդ բաղադրիչ՝ ապրանքի՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի դասակարգման ծածկագրի վերաբերյալ՝ ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները՝

0՝ փոփոխություններ չեն կատարվել.

1՝ ապրանքների՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ոչ ճիշտ դասակարգման դեպքի բացահայտում.

6-րդ բաղադրիչ՝ ԱՀ-ում ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները՝

0՝ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ չեն կատարվել.

1՝ տեխնիկական սխալներ (վրիպակներ, թվաբանական սխալներ, այդ թվում՝ արժույթի փոխարժեքի սխալ կիրառության հետեւանքով).

2՝ լրացուցիչ հաշվեգրումների (պահումների) հետ կապված սխալներ, այդ թվում՝ միեւնույն ժամանակ տեխնիկական սխալների հայտնաբերման դեպքում.

3՝ մաքսային արժեքի որոշման մեթոդի եւ (կամ) ապրանքների մաքսային արժեքի հաշվարկման հիմքի ընտրության հետ կապված սխալներ, այդ թվում՝ միեւնույն ժամանակ լրացուցիչ հաշվեգրումների (պահումների) հետ կապված տեխնիկական սխալների հայտնաբերման դեպքում.

7-րդ բաղադրիչ՝ հաշվարկված (վճարված) մաքսային եւ այլ վճարների վերաբերյալ ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները.

0՝ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ չեն կատարվել.

1՝ սակագնային արտոնությունների (մաքսատուրքերի վճարման համար սահմանված արտոնությունների), հարկերի, մաքսավճարների վճարման համար սահմանված արտոնությունների տրամադրման պայմանների չկատարման դեպքերի բացահայտում.

2՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններից օգտվելու համար սահմանված՝ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակումների խախտմամբ կամ այդպիսի արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակների խախտմամբ այդ ապրանքները գործողությունների ենթարկելու դեպքերի բացահայտում.

3՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններից օգտվելուց հայտարարատուի հրաժարում.

4՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատման դեպքում այն ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարում, որոնք ձեւակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման պայմանները չկատարելու կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման ժամկետի լրանալու դեպքում, կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատումից հայտարարատուի հրաժարման դեպքում.

5՝ այն մաքսատուրքերի, հարկերի վճարումը, որոնց համար ընձեռվել է հետաձգման (տարաժամկետ վճարման) հնարավորություն.

6՝ այլ հանգամանքների (դեպքերի) ի հայտ գալը, որոնց դեպքում մոտենում է մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, տոկոսագումարների եւ (կամ) տույժերի վճարման ժամկետ.

7՝ ապրանքների բացթողումից հետո մաքսային վճարների համար սահմանված արտոնություններից օգտվելու համար վճարողի կողմից՝ այդ արտոնությունների տրամադրման համար հիմք ծառայող փաստաթղթերը մաքսային մարմիններ ներկայացնելու հետ կապված տեղեկությունների նշում.

8՝ հաշվարկված (վճարված) մաքսատուրքերի, հարկերի վերաբերյալ ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարված այլ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ.

9՝ այլ վճարների վճարման վերաբերյալ ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարված փոփոխություններ եւ (կամ) լրացումներ.

8-րդ բաղադրիչը՝ ԱՀ-ում նշված այլ տեղեկություններում կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները՝

0՝ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ չեն կատարվել.

1՝ ձեւակերպված մաքսային ընթացակարգի պայմանների չկատարման եւ (կամ) ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակումների հետ կապված դեպքերի բացահայտում, ինչպես նաեւ մաքսային ընթացակարգի գործողությունը սահմանված ժամկետում չեզրափակումը.

2՝ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի երկարաձգում.

3՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու մասին ԱՀ-ում նշված տեղեկություններում կատարված փոփոխություններ եւ (կամ) լրացումներ.

4՝ այլ հիմքեր:

Բոլոր բաղադրիչները նշվում են՝ իրարից առանձնացվելով «/» նշանով, իսկ բաղադրիչների միջեւ միջակայքեր թողնել չի թույլատրվում:

7) 46-րդ վանդակ. «Վիճակագրական արժեքը»

46. Վիճակագրական արժեքը

Վանդակը լրացվում է ապրանքների վիճակագրական արժեքի վերաբերյալ ԱՀ-ի 46-րդ վանդակում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունների եւ (կամ) լրացումների դեպքում, այդ թվում՝ ԱՀ-ի վանդակներում նշված եւ ապրանքների վիճակագրական արժեքների հաշվարկման համար օգտագործված տեղեկություններում կատարված փոփոխությունների եւ (կամ) լրացումների դեպքում.

8) 47-րդ վանդակ. «Վճարների հաշվարկումը»

47 Վճարների հաշվարկումը	Տեսակը	Հաշվեգրման հիմքը	Դրույքաչափը	Գումարը	ՎԵ

«Տեսակը», «Հաշվեգրման հիմքը», «Դրույքաչափը», «Գումարը» եւ «ՎԵ» սյունակները լրացվում են «ԱՀ-ի լրացման մասին» հրահանգով սահմանված՝ ԱՀ-ի 47-րդ վանդակի համապատասխան սյունակների լրացման կարգին համապատասխան՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները:

«ՎԵ» սյունակում «ՎԱ» ծածկագիրը նշվում է հետեւյալ դեպքերում՝

այն վճարի վճարման դեպքում, որի համար ընձեռված է եղել վճարման հետաձգման հնարավորություն.

այն վճարի վճարման դեպքում, որի համար տրամադրվել են վճարման համար սահմանված արտոնություններ.



այն վճարի վճարման դեպքում, որի համար վերջին ժամանակահատվածի կտրվածքով ընձեռված է եղել տարածամկետ վճարման հնարավորություն.

վերջին ժամանակահատվածի կտրվածքով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հետ կապված վճարի վճարման դեպքում, եթե ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատում կիրառելու ժամանակահատվածի համար փաստացի վճարված (բռնագանձված) վճարման գումարը համեմատական է վճարման ենթակա այդ վճարի գումարի հետ՝ հաշվարկված այն չափով, որը կգործեր, եթե ապրանքները ձեւակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

«ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հետ կապված եւ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման պայմանների խախտման դեպքում կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատման կիրառումն սկսելու եւ կամ արտոնություններից օգտվելուց եւ ապրանքները գործողությունների ենթարկելուց հրաժարվելու դեպքում՝ այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման այնպիսի սահմանափակումների խախտմամբ, որոնք սահմանվել են այդպիսի արտոնություններից օգտվելու համար, վանդակը լրացվում է «ԱՀ-ի լրացման մասին» հրահանգով սահմանված՝ ԱՀ-ի 47-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան՝ այն ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատման դեպքում, որոնք ձեւակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով.

9) «B» վանդակ. «Հաշվարկի մանրամասները»

B ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ					
Տեսակը	Գումարը	Նախորդ գումարը	Փոփոխությունները	Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը	ՎՁ
Վճարման (բռնագանձման) կամ վերադարձման ենթակա ընդհանուր գումարը					

Վանդակը լրացվում է այն դեպքում, երբ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումն ազդում է վճարման ենթակա մաքսային եւ այլ վճարների չափի վրա կամ այն վերաբերում է մաքսային եւ այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերի մասին տեղեկություններին:

Վանդակում բոլոր այն ապրանքների համար, որոնց մասին տեղեկություններ են նշված ԱՀ-ում, նշվում են մաքսային եւ այլ վճարների վճարման (բռնագանձման) մասին տեղեկություններ, որոնցում կատարվում են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները՝

մաքսային եւ այլ վճարների գումարը կլորացվում է մաթեմատիկական կանոնների համաձայն՝

Բելառուսի Հանրապետությունում արտահանման մաքսատուրքը ԱՄՆ դոլարով հաշվարկելու եւ վճարելու դեպքում՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշը, իսկ այլ դեպքերում՝ մինչեւ ամբողջ թիվը.

Ղազախստանի Հանրապետությունում՝ մինչեւ ամբողջ թիվը.

Ռուսաստանի Դաշնությունում՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշը:

«Տեսակը» սյունակում նշվում է մաքսային եւ այլ վճարների տեսակի ծածկագիրը՝ մաքսային մարմինների կողմից գանձման ենթակա հարկերի, գանձումների եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան, որը հաստատվել է «Մաքսային հայտարարագրերի լրացման համար կիրառվող դասակարգիչների մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ:

«Գումարը» սյունակում բոլոր այն ապրանքների համար, որոնց մասին տեղեկություններ են նշված ԱՀ-ում, նշվում է մաքսային եւ այլ վճարների՝ վճարման ենթակա ամբողջ գումարը՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները եւ (կամ) լրացումները: Այն դեպքում, երբ մաքսային եւ այլ վճարների՝ վճարման ենթակա ամբողջ գումարը բոլոր այն ապրանքների համար, որոնց մասին տեղեկություններ են նշված ԱՀ-ում, փոփոխություններից եւ (կամ) լրացումներից հետո հավասար է 0-ի, «Գումարը» սյունակում նշվում է «0» թիվը:

«Նախորդ գումարը» սյունակում ներկայացվում է մաքսային եւ այլ վճարների ընդհանուր գումարը, որը նշված է՝

ԱՀ-ի «B» վանդակում, եթե մաքսային եւ այլ վճարների վճարման (բռնագանձման) մասին տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվում են առաջին անգամ.

նախորդ ԱՀԾ-ի «B» վանդակի «Գումարը» սյունակում, եթե մաքսային եւ այլ վճարների վճարման (բռնագանձման) մասին տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարվել են ավելի վաղ:

«Փոփոխությունները» սյունակում նշվում է «Գումարը» եւ «Նախորդ գումարը» սյունակներում նշված մեծությունների տարբերությունը: Եթե «Գումարը» սյունակում նշված մեծությունը փոքր է «Նախորդ գումարը» սյունակում նշված մեծությունից, ապա «Փոփոխությունները» սյունակում ստացված արժեքից առաջ նշվում է «-» հանման նշանը:

Եթե «Փոփոխությունները» սյունակում նշված մեծությունը տարբեր է 0-ից, ապա մաքսային եւ այլ վճարների յուրաքանչյուր տեսակի համար «Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը» սյունակում առանձին տողով (առանձին տողերով)՝ ըստ այդ վճարի վճարումը հաստատող փաստաթղթերի, նշվում են տեղեկություններ՝ «ԱՀ-ի լրացման մասին» հրահանգով սահմանված՝ ԱՀ-ի «B» վանդակի լրացման կարգին համապատասխան՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները՝

այն դեպքում, երբ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու արդյունքում մաքսային եւ այլ վճարներ ենթակա են լրացուցիչ վճարման, ապա «Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը» սյունակում նշվում են մաքսային եւ այլ վճարների լրացուցիչ հաշվարկված գումարների փաստացի վճարման մասին տեղեկություններ՝ ըստ այն վճարման փաստաթղթերի, որոնց համապատասխան կատարվել է վճարումը.

այն դեպքում, երբ ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու արդյունքում մաքսային եւ այլ վճարներ ենթակա են վերադարձման («Փոփոխությունները» սյունակում նշված է «-» հանման նշանով մեծություն), ապա «Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը» սյունակում նշվում են մաքսային եւ այլ վճարների վերադարձման ենթակա գումարի մասին տեղեկություններ՝ ըստ այն վճարման փաստաթղթերի, որոնց համապատասխան կատարվել է վերադարձման ենթակա վճարի վճարումը (բռնագանձումը): Ընդ որում, «Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը» սյունակի 2-րդ բաղադրիչում մաքսային եւ այլ վճարների վճարված գումարը նշվում է «-» հանման նշանով:

Մաքսային եւ այլ վճարների վճարումը հաստատող փաստաթղթերի մասին տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտության դեպքում (ԱՀ-ի «Ե» վանդակի 4 – 7-րդ բաղադրիչներ) «Վճարման հանձնարարագրի համարը եւ ամսաթիվը» սյունակում տեղեկությունները նշվում են երկու տողով՝

առաջին տողում նշվում են ԱՀ-ի «Ե» վանդակից փոխանցված տեղեկությունները՝ 2-րդ բաղադրիչում գումարը նշելով «-» հանման նշանով.

երկրորդ տողում տեղեկությունները նշվում են «ԱՀ-ի լրացման մասին» հրահանգով սահմանված՝ ԱՀ-ի «Ե» վանդակի լրացման կարգին համապատասխան եւ փոփոխությունները եւ (կամ) լրացումները հաշվի առնելով:

«ՎԶ» սյունակում նշվում է մաքսային եւ այլ վճարների վճարման ձեւը՝ մաքսային մարմինների կողմից գանձման ենթակա մաքսային եւ այլ վճարների

վճարման ձեւերի դասակարգչին համապատասխան, որը հաստատվել է 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ.

10) 54-րդ վանդակ. «Վայրը եւ ամսաթիվը»

54. Վայրը եւ ամսաթիվը
-----------------------

Վանդակում նոր տողից նշվում են տեղեկություններ ԱՀԾ-ն լրացրած անձի մասին:

Այն դեպքում, երբ ԱՀԾ-ն լրացվել է մաքսային ներկայացուցչի կողմից, ապա 1-ին համարի տակ նշվում է այն փաստաթղթի համարը, որը վկայում է անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցելու մասին, ինչպես նաեւ հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի միջեւ կնքված պայմանագրի համարը եւ ամսաթիվը:

1-ին համարի տակ տեղեկություններ չեն նշվում այն դեպքում, երբ ԱՀԾ-ն լրացվել է ԱՀ-ի 14-րդ վանդակում նշված հայտարարատուի կողմից:

1-ին համարի տակ լրացուցիչ նշվում է՝

Բելառուսի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ).

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի – նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ «/» նշանից հետո՝ մաքսային ներկայացուցչին հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), ընդ որում, եթե մաքսային ներկայացուցչի անունից ներկայանում է նրա առանձնացված ստորաբաժանումը, ապա նշվում է այն հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), որը տրվել է՝ ըստ այդ ստորաբաժանման գտնվելու վայրի:

2-րդ համարի տակ նշվում է ԱՀԾ-ն լրացրած ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը, նրա ինքնությունը հաստատող փաստաթղթի տրամադրման

համարը եւ ամսաթիվը (ինչպես նաեւ այդ փաստաթղթի անվանումը՝ Ռուսաստանի Դաշնության համար), հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի հաստիքացուցակում տվյալ անձի կողմից զբաղեցրած պաշտոնը եւ կոնտակտային հեռախոսի համարը:

Բելառուսի Հանրապետությունում, եթե ԱՀԾ-ն հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի միջեւ կնքված հանձնարարության պայմանագրի համաձայն լրացվել է մաքսային ձեւակերպումների մասնագետ հանդիսացող, տվյալ մաքսային ներկայացուցչի հաստիքացուցակում ընդգրկված եւ այդ մաքսային ներկայացուցչի աշխատող հանդիսացող անձի կողմից, ապա 2-րդ համարի տակ լրացուցիչ նշվում է այդ աշխատողի՝ մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականի համարը:

3-րդ համարի տակ նշվում են ԱՀԾ-ն լրացրած անձի լիազորությունները հաստատող փաստաթղթերի մասին տեղեկությունները՝

հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի լիազորությունները հաստատող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը, եթե ԱՀԾ-ն լրացվել է այդ ղեկավարի կողմից.

մաքսային ներկայացուցչի կամ հայտարարատուի անունից գործողություններ կատարելու լիազորագրի համարը եւ տրամադրման ամսաթիվը, ինչպես նաեւ լիազորագրի գործողության ժամկետը (այդպիսի ժամկետ սահմանված լինելու դեպքում), եթե ԱՀԾ-ն լրացվել է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի աշխատողի կողմից:

Բելառուսի Հանրապետությունում 4-րդ համարի տակ նշվում է փաստաթղթերի գրանցման ելից համարը՝ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի ելից փաստաթղթերի հաշվառման համակարգին (կարգին) համապատասխան:

ԱՀԾ-ն գրավոր ներկայացնելու դեպքում ԱՀԾ1-ի 54-րդ վանդակում եւ ԱՀԾ2-ի բոլոր վանդակներից հետո ԱՀԾ-ն լրացրած անձը դնում է իր ստորագրությունը, նշում է ԱՀԾ-ն լրացնելու ամսաթիվը եւ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքով հաստատում է ԱՀԾ-ում նշված

տեղեկությունները, եթե Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենա կնիք:

ԱՀԾ-ն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացնելու դեպքում ԱՀԾ-ում նշված տեղեկությունների հաստատումը կատարվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով.

11) «A» վանդակ

A
---

Վանդակի առաջին տողում նշվում է ԱՀԾ-ի գրանցման համարը՝ ըստ հետեւյալ սխեմայի.

$$\frac{\text{XXXXXXXXX} / \text{XXXXXXXX} / \text{XXXXXXXX}}{1} / \frac{X}{2},$$

որտեղ՝

1-ին բաղադրիչը՝ ԱՀ-ի գրանցման համարը, այն տեղեկությունները, որոնցում կատարվել են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ.

2-րդ բաղադրիչը՝ ԱՀ-ին կցված ԱՀԾ-ի հերթական համարը, այն տեղեկությունները, որոնցում կատարվում են փոփոխությունները եւ (կամ) լրացումները (տվյալ ԱՀ-ին կցված թվով առաջին ԱՀԾ-ի համար՝ սկսած «01» համարից, երկրորդի համար՝ «02» , երրորդի՝ «03» եւ այլն).

ԱՀԾ1-ի «A» վանդակում՝ ԱՀԾ-ի գրանցման համարի տակ, մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից նշվում է ամսաթիվ, իսկ մինչեւ ապրանքների բացթողումը փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու դեպքում նշվում է

նաեւ հայտարարատուի կողմից ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին դիմում ներկայացնելու ժամանակը, կամ՝ ԱՀԾ-ն ներկայացնելու ամսաթիվը, եթե հայտարարատուից չի պահանջվում ներկայացնել ԱՀ-ում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին դիմում:

ԱՀԾ-ն գրավոր ներկայացնելու դեպքում «A» վանդակում կատարված բոլոր գրառումները վավերացվում են ԱՀԾ-ն գրանցած մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ՝ անձնական համարակալված կնիքի դրոշմվածք դնելով:

ԱՀԾ-ն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացնելու դեպքում «A» վանդակում կատարված գրառումների հաստատումը կատարվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

---



ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի  
դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման

**Փ Ո Փ Ո Խ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր**

**Մ ա ք ս ա յ ի ն մ ի ու թ յ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի որ ո շ յ ու մ ն եր ու մ  
կ ա տ ա ր վ ո ղ**

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների մասին հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգում.

ա) 15-րդ կետի 45-րդ ենթակետում՝

երեսուներորդ պարբերությունից (աղյուսակից հետո) հանել վերջին նախադասությունը.

երեսունչորսերորդ պարբերությունից (աղյուսակից հետո) հանել վերջին նախադասությունը.

երեսունհինգերորդ պարբերությունից (աղյուսակից հետո) հանել վերջին նախադասությունը.

երեսունվեցերորդ պարբերությունից (աղյուսակից հետո) հանել վերջին նախադասությունը.

երեսունյոթերորդ պարբերությունում (աղյուսակից հետո)՝

«փուլերի թիվը՝ փուլային վճարման ժամանակացույցին համապատասխան» բառերը փոխարինել «ժամանակահատվածների քանակը՝ վճարման ժամանակացույցին համապատասխան» բառերով.

հանել վերջին նախադասությունը.

երեսունութերորդ պարբերությունից (աղյուսակից հետո) հանել վերջին նախադասությունը.

քառասուներորդ պարբերությունը (աղյուսակից հետո) ուժը կորցրած ճանաչել.

հիսունյոթերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «:» կետադրական նշանը փոխարինել«.» կետադրական նշանով.

վերջին պարբերությունում «միության» բառից հետո ավելացնել «մաքսային» բառը.

բ) 43-րդ կետի 4-րդ ենթակետում՝

չորրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«նշվում են տեղեկություններ ԱՀ-ում հայտագրված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին մինչեւ ապրանքների բացթողումը՝ կատարելով «Ճշգրտված վանդակներ՝ \_\_\_\_\_» գրառումը (նշելով ապրանքի հերթական համարը եւ ԱՀ-ի այն վանդակների համարները, որոնցում կատարվել են փոփոխությունները եւ (կամ) լրացումները), որը հաստատվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով:».

տասնվեցերորդ եւ տասնյոթերորդ պարբերությունները փոխարինել հետեւյալ բովանդակությամբ պարբերություններով.

«տեղեկություններ ԱՀ-ում հայտագրված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին ապրանքների բացթողումից հետո՝ կատարելով «Ճշգրտված վանդակներ՝ \_\_\_\_\_» գրառումը (նշելով ապրանքի հերթական համարը եւ ԱՀ-ի այն վանդակների համարները, որոնցում կատարվել են փոփոխությունները եւ (կամ) լրացումները), որը հաստատվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով.

տեղեկություններ տրամադրված (մաքսային մարմնի կողմից ընդունված) այն մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահով մասին, որոնք կարող են լրացուցիչ հաշվեգրվել: Այդ տեղեկությունները ձեւավորվում են ըստ հետեւյալ սխեմայի.

1-ին բաղադրիչը՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման տրամադրման հիմքը՝ հետեւյալ թվային նշումներից որեւէ մեկը կատարելու միջոցով.

«1»՝ եթե, Օրենսգրքի 63-րդ հոդվածին համապատասխան, մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) ապրանքների ծագման երկիրը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում կամ այնպիսի փաստերի հայտնաբերման դեպքում, որոնք վկայում են այն մասին, որ ներկայացված փաստաթղթերը ձեւակերպված են ոչ պատշաճ կերպով եւ (կամ) պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ.

«2»՝ եթե, Օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան, մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) մաքսային մարմնի կողմից ապրանքների մաքսային արժեքի լրացուցիչ ստուգում անցկացնելիս.

«3»՝ եթե Օրենսգրքի 198-րդ հոդվածին համապատասխան, մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) մաքսային մարմնի կողմից ապրանքների փորձանմուշների կամ նմուշների, մանրամասն տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության կամ մաքսային մարմնի կողմից ներկայացված ԱՀ-ում կամ այլ փաստաթղթերում տեղեկությունների արժանահավատության ստուգման նպատակով փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու դեպքում:

«4»՝ եթե մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային

մարմնի կողմից ընդունվել է) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված մյուս դեպքերում.

2-րդ բաղադրիչը՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման միջոցի ծածկագիրը՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման միջոցների դասակարգչին համապատասխան.

3-րդ բաղադրիչը՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման գումարը.

4-րդ բաղադրիչը՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթի համարը.

5-րդ բաղադրիչը՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման տրամադրումը (մաքսային մարմնի կողմից ընդունումը) հաստատող փաստաթղթի ամսաթիվը.

Բոլոր բաղադրիչները նշվում են առանց միջակայքերի եւ իրարից անջատվում են «՝» նշանով:

Տվյալ վանդակում կարող են նշվել այլ՝ սույն ենթակետով չնախատեսված տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի՝ տրամադրված (մաքսային մարմնի կողմից ընդունված) վճարման ապահովման նկարագրությունը ճշտելու համար, եթե դա նախատեսված է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ.».

զ) ուժը կորցրած ճանաչել XII բաժինը:

2. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշման մեջ.

ա) նշված որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգում՝

8-րդ կետում.

առաջին պարբերությունում «սահմանված կարգով» բառերը փոխարինել «, Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգին համապատասխան,» բառերով.

երկրորդ պարբերությունից հանել «սահմանված կարգով» բառերը.

9-րդ կետում.

երկրորդ պարբերությունում «սահմանված կարգով» բառերը փոխարինել «ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգին համապատասխան» բառերով.

ավելացնել պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումը դիտարկվում է որպես ապրանքների մասին հայտարարագրում հայտագրված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին որոշում».

10-րդ կետի առաջին պարբերությունում «սահմանված կարգով» բառերը փոխարինել «, Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման կարգին համապատասխան,» բառերով.

13-րդ կետում.

«սահմանված կարգով» բառերը փոխարինել «ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգին համապատասխան» բառերով.

«փոխանցվում է» բառերը փոխարինել «հանձնվում է» բառերով.

16-րդ կետում.

առաջին պարբերությունից հանել «սահմանված կարգով» բառերը.

ավելացնել պարբերություն՝ հետեյալ բովանդակությամբ.

«Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման գումարի հաշվարկը ձեւակերպվում է պաշտոնատար անձի կողմից՝ կարգի թիվ 4 հավելվածի համաձայն եւ հանձնվում է (ուղարկվում է) հայտարարատուին (մաքսային ներկայացուցչին)՝ լրացուցիչ ստուգում անցկացնելու մասին որոշման հետ միասին:».

17-րդ կետում.

երկրորդ պարբերությունը շարադրել հետեյալ խմբագրությամբ՝

«Տրամադրված (մաքսային մարմնի կողմից ընդունված) մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման մասին տեղեկությունները պաշտոնատար անձի կողմից նշվում են ապրանքների մասին հայտարարագրում՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների մասին հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգին համապատասխան:».

ավելացնել պարբերություն՝ հետեյալ բովանդակությամբ.

«Հետագա գործողություններն իրականացվում են պաշտոնատար անձի կողմից՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 262 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների բացթողման մերժումը ձեւակերպելու կարգի մասին» հրահանգին համապատասխան: Ընդ որում, մաքսային մարմնի կողմից լրացուցիչ ստուգում չի անցկացվում:».

20-րդ կետի առաջին պարբերությունում «սահմանված կարգով» բառերը փոխարինել «ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգին համապատասխան» բառերով.

21-րդ կետի երկրորդ պարբերությունում ավելացնել նախադասություն՝ հետեյալ բովանդակությամբ.

«Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումը դիտարկվում է որպես ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին որոշում».

22-րդ եւ 23-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«22. Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշում ընդունելիս՝ պաշտոնատար անձի կողմից, ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգին համապատասխան, մաքսային արժեքի հայտարարագրում (ապրանքների մասին հայտարարագրում) կատարվում են համապատասխան նշումներ եւ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին ձեւակերպվում է որոշում երկու օրինակից՝ կարգի թիվ 1 հավելվածին համապատասխան, որոնցից մեկը մնում է մաքսային մարմնում, մյուսը՝ հանձնվում է (ուղարկվում է) հայտարարատուին (մաքսային ներկայացուցչին)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգին համապատասխան:

Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման մեջ պաշտոնատար անձը նշում է ապրանքների մաքսային արժեքը եւ դրա որոշման մեթոդը՝ Համաձայնագրի 4-10-րդ հոդվածներին համապատասխան, ինչպես նաեւ տեղեկությունների ստացման համապատասխան աղբյուրների վավերապայմանները:

23. Հայտարարատուն (մաքսային ներկայացուցիչը), ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման կարգին համապատասխան, իրականացնում է ապրանքների մաքսային արժեքի ճշգրտում՝ ելնելով ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման մեջ պաշտոնատար անձի կողմից նշված՝ ապրանքների մաքսային արժեքի մեծությունից, վճարում է այն մաքսատուրքերը, հարկերը, որոնք հաշվարկվել են՝ հաշվի առնելով ապրանքների ճշգրտված մաքսային արժեքը:».

24-րդ կետը հանել.

27-րդ եւ 28-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«27. Ապրանքների բացթողումից հետո մաքսային արժեքի հսկողության ընթացքում ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններ հայտնաբերելու, այդ թվում՝ ապրանքների մաքսային արժեքի

որոշման մեթոդի սխալ ընտրության եւ (կամ) ապրանքների մաքսային արժեքի սխալ որոշման դեպքում, մաքսային մարմինն ընդունում է որոշում՝ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին:

Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումը ձեւակերպվում է կարգի թիվ 1 հավելվածին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ եւ դիտարկվում է որպես ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին որոշում:

Հայտարարատուն (մաքսային ներկայացուցիչը) տեղեկացվում է ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման մասին՝ ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգով նախատեսված կանոնների համաձայն ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու մասին որոշումն ուղարկելու համար:

28. Հայտարարատուն (մաքսային ներկայացուցիչը), ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման կարգին համապատասխան, իրականացնում է ապրանքների մաքսային արժեքի ճշգրտում, ինչպես նաեւ վճարում է այն մաքսավճարները, հարկերը, որոնք հաշվարկվել են՝ հաշվի առնելով ապրանքների ճշգրտված մաքսային արժեքը:».

29-րդ կետը հանել.

թիվ 1 հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝



«Թիվ 1 հավելված

Ապրանքների մաքսային արժեքի հսկողության  
կարգի

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի  
կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի  
թիվ 289 որոշման խմբագրությամբ)

(ձեւ)

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին**

20\_\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_»-ի

Մաքսային մարմնի  
անվանումը

Հայտարարատուի (մաքսային  
ներկայացուցչի) անվանումը

Տեղեկացնում ենք, որ, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 68-րդ հոդվածին համապատասխան, մաքսային մարմնի կողմից ընդունվել է որոշում ապրանքների թիվ \_\_\_\_\_ հայտարարագրում հայտագրված ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին՝

Ապրանքի համարը	Ընդունված որոշման հիմնավորումը

Ապրանքների մաքսային արժեքը պետք է որոշվի 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մասին» համաձայնագրին համապատասխան՝ հետեւյալ տեղեկությունների հիման վրա.

Ապրանքի համարը	Ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդի համարը	Ապրանքների մաքսային արժեքը	Տեղեկությունների ստացման աղբյուրը (նշելով վավերապայմանները՝ դրանց առկայության դեպքում)

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 191-րդ հոդվածին համապատասխան՝ Դուք ապրանքների մասին հայտարարագրում պետք է կատարեք հետեւյալ փոփոխությունները եւ (կամ) լրացումները.

Համարը՝ ը/կ	Ապրանքի համարը	Սյունակի/սյունակի ենթաբաժնի համարը	Ավելի վաղ նշված տեղեկությունները	Ճշգրտված տեղեկությունները

մինչեւ 20\_\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_»-ը \*

հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից տվյալ որոշումն ստանալու օրվանից տասն աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:\*\*

Անձնական  
համարակալված  
կնիքը

(մաքսային մարմնի պաշտոնատար անձի ԱԱՀ-ն) (ստորագրությունը)

(հայտարարատուի ներկայացուցչի (մաքսային ներկայացուցչի) ԱԱՀ-ն) (ստորագրությունը) (որոշումն ստանալու ամսաթիվը)

(որոշումն ուղարկելու փոստային հասցեն նշվում է որոշումը փոստով ուղարկելու դեպքում)

(որոշումը փոստով ուղարկելու ամսաթիվը) (որոշումը փոստով ուղարկած՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ԱԱՀ-ն եւ ստորագրությունը)

\* Նշվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների բացթողման ժամկետները չգերազանցող ժամկետը՝ մինչեւ ապրանքների բացթողումը որոշումն ընդունելու դեպքում, կամ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետը՝ ապրանքների բացթողումից հետո որոշումն ընդունելու դեպքում:

\*\* Նշվում է ապրանքների բացթողումից հետո որոշումն ընդունելու դեպքում, այդ թվում՝ լրացուցիչ ստուգման անցկացման արդյունքների հիման վրա, եթե Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ:».

թիվ 2 հավելվածից հանել «լրացնել մաքսային արժեքի եւ մաքսային վճարների ճշգրտման ձեւը եւ».

ավելացնել թիվ 4 հավելվածը՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Թիվ 4 հավելված

Ապրանքների մաքսային արժեքի  
հսկողության կարգի

(ձեւ)

**ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ**

**մաքսատուրքերի, հարկերի վճարման՝**

ըստ ապրանքների մասին թիվ \_\_\_\_\_ հայտարարագրի

				Թերթ թիվ	
Ընդամենը՝ ապահովման գումարը՝ ըստ ապրանքների մասին հայտարարագրի					
Այն ապրանքների քանակը, որոնց համար պահանջվում է ապահովում					
Ապրանքի մակնշումը եւ քանակը, ապրանքի նկարագրությունը, արտադրողի անվանումը		Ապրանք թիվ		Ապրանքի ծածկագիրը	
		Ապրանքի ծագման երկիրը		Ջուտ քաշը (կգ)	
		Հայտարարատուի կողմից հայտագրված մաքսային արժեքը			
Տեղեկությունների ստացման աղբյուրները՝ ապահովման գումարի հաշվարկի հիմքն ընտրելու համար					
Ապահովման գումարի հաշվարկի հիմքը (ազգային արժույթով)՝ մեկ միավոր ապրանքի համար/ ընդհանուր գումարը					
Ապահովման գումարի հաշվարկը				Հայտարարատուի կողմից վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարը (ապրանքների մասին հայտարարագրին համապատասխան)	
Տե- սակը	Հաշվե- գրման	Դրույքա- չափը	1-ին գումարը	Տեսակը	2-րդ գումարը

	հիմքը				
Ընդամենը (1-ին գումարը)			Ընդամենը (2-րդ գումարը)		
Ընդամենը՝ ապահովման գումարն ըստ ապրանքի (1-ին գումարից 2-րդ գումարը)					

\_\_\_\_\_

(մաքսային մարմնի պաշտոնատար անձի ԱԱՀ-ն)

(ստորագրությունը)

Անձնական  
համարակալ-  
ված կնիք

».

բ) նշված որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման կարգում՝

1-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն Կարգը մշակվել է Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) եւ 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի հիման վրա:».

3-րդ կետում.

երկրորդ պարբերությունից հանել «՝ սահմանված կարգով ձեւակերպվող» բառերը.

երրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ապրանքների մասին հայտարարագրում նշված փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարում՝ կիրառելով ապրանքների մասին հայտարարագրերի ճշգրտումը (այսուհետ՝ ԱՀԾ):».

5-րդ կետում «ՄԱՃ-ը լրացնելիս՝» բառերը փոխարինել «Ապրանքների մաքսային արժեքը ճշգրտելիս՝» բառերով.

7-րդ կետում «Մաքսային միության անդամ պետությունում» բառերը փոխարինել «Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ» բառերով.

8-րդ կետում «ՄԱՃ» բառը փոխարինել «ԱՀՃ» բառով.

9-րդ կետում.

«ՄԱՃ-ի ձեւը» բառերը փոխարինել «ԱՀՃ-ի ձեւը» բառերով.

Երկրորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «ԱՀՃ-ի Եւ ՄԱՀ-ի համապատասխան օրինակներն ուղարկվում են հայտարարատուին (մաքսային ներկայացուցչին)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մասին հայտարարագրում նշված տեղեկություններում փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու կարգով սահմանված ժամկետում:»

10-12-րդ կետերը, III եւ IV բաժինները ուժը կորցրած ճանաչել.

թիվ 1 եւ 2 հավելվածները հանել:

---